

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՄԱԽԱՌԻ

ԿԱՐԾԻՔ

Ա.01.09 «Մաթեմատիկական կիրեռնետիկա և մաթեմատիկական տրամաբանություն» մասնագիտությամբ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Շիգրան Կարենի Պետրոսյանի «Գրաֆների գագաթներ տարրերակող կողային ներկումների հետազոտում» թեմայով ատենախոսության վերաբերյալ:

Հայտնի է, որ գրաֆների տարաբնույթ սահմանափակումներով ներկումների խնդիրների հանդեպ հետաքրքրությունը պայմանավորված է այդ խնդիրների և այլ կիրառական խնդիրների միջև առկա սերտ կապով: Մասնավորապես, գրաֆների տարաբնույթ սահմանափակումներով ներկումների խնդիրները սերտորեն կապված են կարգացուցակների տեսության խնդիրների, անլար ռադիոհաղորդման ցանցերի հաճախականությունների նշանակման խնդիրների և անկանոն ցանցերի խնդիրների հետ: Գրաֆների ճիշտ կողային ներկումները, որոնց գագաթներին սպեկտրների քանակի վրա տրվում են սահմանափակումներ, առաջին անգամ դիտարկվել են դեռևս 90-ական թվականներին: Մասնավորապես, գրաֆների գագաթներ տարրերակող կողային ներկումները ներմուծվել են Ա. Բարիսի և Ռ. Շելպի կողմից 1997 թվականին: *G* գրաֆի կողային ներկումները կողային ներկումը այնպիսի ճիշտ կողային ներկում է, որի դեսքում գագաթներ տարրերակող կողային ներկումը այնպիսի ճիշտ կողային ներկում է, որի դեսքում տարրեր գագաթների սպեկտրները զույգ առ զույգ տարրեր են: Այս աշխատանքը շարունակում է հետազոտել գրաֆների գագաթներ տարրերակող կողային ներկումները գրաֆների տարրեր դասերի համար: Թեման արդիական է, ունի կարևոր տեսական և կիրառական նշանակություն:

Շիգրան Պետրոսյանի ատենախոսական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից:

Ներածությունում համառոտակի ներկայացված է ատենախոսության թեման, նրա արդիականությունը, գիտական նորույթը և ստացված արդյունքների գործնական նշանակությունը:

Առաջին գլխում ստացված են գրաֆների գագաթներ տարրերակող կողային ներկումներում մասնակցող գույների նվազագույն քանակի նոր գնահատականներ՝ արտահայտված այդ գրաֆների գագաթների (կողերի) քանակներով և առավելագույն աստիճաններով: Մասնավորապես, ստացված են գրաֆների տարրեր դասերի գագաթներ տարրերակող քրոմատիկ ինդեքսի χ'_{nd} (*G*)-ի ճշգրիտ արժեքներ որոշ ընդհանրացված ֆիրոնաչի և Լուկասի խորանարդների համար (Թեորեմներ 1.1.1 և 1.1.2), ինչպես նաև տրված են այդ պարամետրի ստորին և վերին գնահատականներ լրիվ տրոհվող, հողմաղաց և ընդհանրացված հողմաղաց, թագ գրաֆների համար, որոնք հաստատում են Բարիսի և Շելպի հիպոթեզը այդ գրաֆների համար (Թեորեմներ 1.2.1, 1.3.1, 1.3.2, 1.4.1):

Գլուխ 2-ում ստացված են լրիվ բազմակողմանի գրաֆների գագաթներ տարրերակող կողային ներկումների կառուցման և թվային պարամետրերի գնահատման հետ առընչվող մի շարք արդյունքներ: Մասնավորապես, ստացված են χ'_{nd} (*G*) պարամետրի ստորին և վերին շարք պարամետրերի գնահատականներ լրիվ բազմակողմանի գրաֆների համար ընդհանուր դեպքում (Թեորեմ 2.2.1), ինչպես նաև այդ պարամետրի ստորին և վերին գնահատականներ լրիվ երեք և չորս կողմանի գրաֆների համար, իսկ որոշ դեպքերում ճշգրիտ արժեքներ (Թեորեմներ 2.2.1, 2.2.4, 2.2.5, 2.3.1, 2.3.3, 2.3.4):

Երրորդ գլխում հետազոտված են գրաֆների նկատմամբ տարրեր գործողությունների արդյունքում ստացված գրաֆների գագաթներ տարրերակող կողային ներկումների կառուցման և թվային պարամետրերի գնահատման խնդիրներ: Մասնավորապես, տրված են գրաֆների կորոնա արտադրյալի χ'_{nd} պարամետրի հասանելի ստորին և վերին գնահատականներ (Թեորեմներ 3.1.1, 3.1.2), ինչպես նաև այդ պարամետրի վերին գնահատականներ գրաֆների գումարի և դեկարտյան գումարի համար (Թեորեմներ 3.2.1, 3.2.2, 3.3.3):

Ատենախոսությունում նկատվել են հետևյալ թերությունները.

1. Ատենախոսության 1.2 և 1.3 պարագրաֆներում հեղինակի կողմից տրվել են լրիվ տրոհվող գրաֆների, ինչպես նաև թագ գրաֆների զագաթներ տարբերակող քրոմատիկ ինդեքսի ստորին և վերին գնահատականներ, սակայն վերին գնահատականի հասանելիության հարցը չի դիտարկվել (Ձեռքեմ 1.2.1, Ձեռքեմ 1.4.1),

2. պարագրաֆ 2.1-ում տրված են լրիվ բազմակողմանի գրաֆների զագաթներ տարբերակող քրոմատիկ ինդեքսի ստորին և վերին գնահատականներ, սակայն գնահատականների միջև առկա է զգալի տարբերություն (Ձեռքեմ 2.1.1),

3. սեղմագրի 4-րդ էջի առաջին պարբերության երկու տեղերում օգտագործված է $\binom{n}{k} \geq n_d$ ՝ անհավասարությունը, սակայն պետք է լինի $\binom{k}{d} \geq n_d$,

4. սեղմագրի 9-րդ և ատենախոսության 95-րդ էջերում $G[H]$ և $G \oplus H$ գրաֆների կողերի բազմությունների սահմանումների մեջ գրված է « $v_1 v_2 \in V(G)$ » և « $u_1 u_2 \in V(H)$ », սակայն պետք է լինի « $v_1 v_2 \in E(G)$ » և « $u_1 u_2 \in E(H)$ »:

Կարծում եմ նշված թերությունները չեն արժեգրկում ատենախոսությունում ստացված արդյունքները: Հեղինակը ունի հրապարակված 11 գիտական աշխատանք, որոնք ամբողջովին արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները: Աշխատանքի արդյունքները գեկուցվել են միջազգային և հանրապետական գիտաժողովներում: Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Ատենախոսությունն իրենից ներկայացնում է ամբողջական ավարտուն գիտական աշխատանք, որը բավարարում է «Հարձրագույն Կրթության և Գիտության Կոմիտեի կողմից թեկնածուական ատենախոսությունների նկատմամբ ներկայացվող բոլոր պահանջներին, իսկ թեկնածուական ատենախոսությունների նկատմամբ ներկայացվող բոլոր պահանջներին, իսկ նրա հեղինակը՝ Տիգրան Կարենի Պետրոսյանը, արժանի է Փիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը»:

Դաշտոնական ընդդիմախոս,
«Հայ-Ռուսական համալսարան», Փ.մ.գ.թ.

S. E. Փիլիպոսյան

S. E. Փիլիպոսյանի ստորագրությունը վավերացնում եմ՝

ՀՈՀ գիտական խորհրդի քարտուղար

Ռ. Ա. Կասարաբովա

27 հունիսի 2025թ.

